

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի ՀՕ-135-Ն դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21.2-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «հանձնաժողովի» բառից առաջ լրացնել «կամ դատավորների գնահատման» բառերը,

2) 4-րդ մասում «հանձնաժողովի» բառից առաջ լրացնել «կամ դատավորների գնահատման» բառերը,

3) 5-րդ մասում «հանձնաժողովի» բառից առաջ լրացնել «կամ դատավորների գնահատման» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 87-րդ հոդվածի

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Դատավորի վարքագծի կանոնները սահմանվում են Դատավորների ընդհանուր ժողովի կողմից»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն օրենսգրքի 93-րդ հոդվածի, 94-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 95-րդ և 96-րդ հոդվածների պահանջները և Դատավորների ընդհանուր ժողովի կողմից սահմանված դատավորի վարքագծի կանոնները պարտադիր են դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող բոլոր անձանց համար այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են նրանց նկատմամբ»:

Հոդված 3. Օրենսգրքի 89-րդ, 90-րդ և 92-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 97-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 97. Արդարադատության խորհուրդը եվ դրա լիազորությունները

Արդարադատության խորհուրդն անկախ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորությունները սույն օրենսգրքով նախատեսված կարգով իրականացնելիս երաշխավորում է դատական իշխանության անկախությունը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

Ներկայումս ՀՀ դատական օրենսգրքի 21.2-րդ հոդվածի 3-5-րդ մասերով սահմանված է դատարանների նախագահներին կամ օրենսգրքով նախատեսված այլ հանձնաժողովների անդամ հանդիսացող դատավորներին գործերի հանձման կարգը, սակայն դատավորների գնահատման հանձնաժողովները բաց են թողնված: Մինչդեռ, դատական օրենսգրքի 21.06.2014թ. փոփոխություններով Օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվել է նաև դատավորների գնահատման հանձնաժողովը:

Բացի այդ, Օրենսգրքի 12-րդ գլխում սահմանված են դատավորի վարքագծի կանոնները, որոնք 87-րդ հոդվածի համաձայն սպառիչ չեն: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է սահմանել վարքագծի լրացուցիչ կանոններ: Օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսված է դատավորի պաշտոն զբաղեցնող անձի վարքագծին վերաբերող նորմեր, 90-րդ հոդվածով՝ դատավորի պատշաճ վարքագիծը ի պաշտոնե գործելիս, 92-րդ հոդվածով՝ դատավորի ոչ դատական գործունեությանը վերաբերող նորմեր:

Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի 2014 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 01-Ն «Հայաստանի Հանրապետության դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին» որոշմամբ հաստատվել են դատավորի վարքագծի ընդհանուր կանոնները, դատավորի վարքագծի կանոններն արդարադատություն իրականացնելիս, դատավորի վարքագծի կանոնները ոչ դատական գործունեության ընթացքում:

Այսպիսով, Օրենսգրքով և դատավորների ընդհանուր ժողովի կողմից սահմանված որոշմամբ սահմանված դատավորի վարքագծի կանոնները կրկնվում են, որոշումը գրեթե ամբողջությամբ ներառում է օրենսգրքով սահմանված կանոնները:

Օրենսգրքով դատավորների ընդհանուր ժողովի իրավասությանը պետք է վերապահել դատավորի վարքագծի կանոնների սահմանումը, քանի որ վերջինս դատական իշխանության ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը քննարկում է դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարց և իր կողմից ձևավորված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի միջոցով անմիջական վերահսկողություն է իրականացնում դատավորների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ:

Օրենսգրքի 97-րդ հոդվածի համաձայն՝ Արդարադատության խորհուրդն անկախ մարմին է, որը Սահմանադրությամբ նախատեսված իր լիազորություններն իրականացնում է սույն օրենսգրքով նախատեսված կարգով: Ոչ տվյալ նորմը, ոչ էլ ՀՀ սահմանադրությունը չեն մատնանշում թե ինչին են ուղղված Արդարադատության խորհրդի լիազորությունները:

Դատավորների նշանակման վերաբերյալ իր 2007 թ. թիվ 028 զեկույցում Վենետիկի հանձնաժողովը նշում է. *«Դատական անկախությունը երաշխավորելու համար պարզաճ մեթոդ է արդարադատութ յան խորհրդի ստեղծումը, որը պետք է օժտված լինի իր կազմի , լիազորութ յունների և ինքնավարության համար սահմանադրական երաշխիքներով»:*

ՀՀ սահմանադրական դատարանը 2012 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-1063 որոշմամբ նշել է. «Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատութ յան խորհուրդը դիտվում է որպես այդ համակարգի գործառնական արդյունավետության ապահովման հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող անկախ գործող ենթահամակարգ:»:

Վերոգրյալից բխում է, որ Սահմանադրությամբ արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունները ուղղված են դատական իշխանության անկախությունը երաշխավորելուն:

Առաջարկվող լուծումները

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ՀՀ դատական օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնց հիման վրա դատավորներին գործերը

հանձնելիս մյուս հանձնաժողովների հետ միասին, հաշվի կառնվի նաև դատավորների գնահատման հանձնաժողովում անդամությունը, բացի այդ, դատավորի վարքագծի կանոնների սահմանումը վերապահել Դատավորների ընդհանուր ժողովի իրավասությանը, ինչպես նաև սահմանել, որ Արդարադատության խորհուրդը երաշխավորում է դատական իշխանության անկախությունը:

Ակնկալվող արդյունք

Ներկայացված նախագծերով նախատեսվող փոփոխությունների արդյունքում, մասնավորապես դատավորների վարքագծի կանոնները Դատավորների ընդհանուր ժողովի կողմից սահմանելու դեպքում, կբացառվի այդ կանոնների կրկնությունը դատական օրենսգրքում և համապատասխան որոշումներում, բացի այդ կապահովվի միասնական մոտեցում վարքագծի կանոնների նկատմամբ:

Իսկ Արդարադատության խորհրդին որպես դատական իշխանության երաշխավոր սահմանելը, ոչ միայն կբարձրացնի նրա դերը, այլև հստակ նպատակաուղղվածություն կսահմանի վերջինիս լիազորություններն իրականացնելու առումով:

ՏԵՂԵԿԱՆՔ

**« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

**« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ և ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ
ՆՎԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: